

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԻՆԻ ԿԱՐԿԻ

# ՄՇԱԿ

Հ Ի Մ Ն Ա Վ Ի Ի Գ Ի Բ Գ Պ Ի Բ Ե Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.

Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Ուղարկումները բաց է առաւտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկով:

Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Չրի բարեբարներ. — Ներքին Տեսչութիւն. Աշխարհագրական ընկերութեան նիստը. Բարեբարների մասին. Նամակ Շամախուց. Նամակ Նուշուց. Ներքին լուրեր. — ԱՐՏԱԳԻՆ Տեսչութիւն Պատերազմի շուրջը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր — ՆԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

### ՉՐԻ ԲԱՐԵԲԱՐՆԵՐ

Թիֆլիսի քաղաքային դռման իր անցեալ նիստում հրատարակեց մի ժառանգութիւնից, որ կտակով թողնված էր նրան բարեգործական նպատակով: Հրատարակելու պատճառով այն չէր, որ մեր քաղաքը բարեբարները և բարեգործութեան կարիք չունին: Դժբաղդաբար, աշխարհի վրա չէր գտնուի մի քաղաք, որ այդպիսի անկարօտ գրութեան մէջ լինի: Պատճառը պարզապէս այն էր, որ ժառանգութիւնը կար թղթի վրա, բայց իրականութեան մէջ գոյութիւն չունէր:

Ոմն Շաղինով կենդանութեան ժամանակ կտակ է գրում, որի մէջ հանդիսաւոր կերպով յայտնում է թէ Թիֆլիս քաղաքին է թողնում իր բոլոր անշարժ կառուցանքները, որոնք գտնվում են Սմոլէնսկի նահանգում: Իր այդ կառուցանքները հաշուով Շաղինով մի շարք բարեբարութիւններ է սահմանում ուսման ծախս, չքաւորութիւնից առաւաղող ազգայնականութեան համար: Անուով է նա իր բարեբարական կարգադրութիւնները, մեռնում է, հուշակիւն է բարեբար և նրա «հոգանիւթ շինուածքը» մի շարք պատիւների է արժանանում:

Անցնում է ժամանակ, քաղաքային ինքնավարութիւնը սկսում է միջոցներ ձեռք անել իրան թողած ժառանգութեան տիրանալու համար: Հաւաքում է տեղեկութիւններ թէ Սմոլէնսկի նահանգի կառուցանքները ինչ գրութեան մէջ են, ինչպէս կարելի է նրանց սեփականատէրը դառնալ: Եւ այդ տեղեկութիւններից այն է դուրս գալի, որ Սմոլէնսկի նահանգում Շաղինովը ոչինչ կառուածք չէ ունեցել և չունի:

Ինչ էր մնում անել: Հրատարակեց «ժառանգութիւնից»: Եւ հրատարակեց:

Եթէ փաստը լինէր մի անհատական երկոյթ, մենք կասէինք, որ ամեն տեղ, ամեն գործի մէջ պատահում են այնպիսի դէպքեր, որոնց անուն տալը հարկաւոր էլ չէ, այնքան պարզ ու յայտնի է այդ անունը ամեն մէկի համար: Տարաբախտաբար, վերջին տարիներում մի քանի այդ տեսակ փաստեր են տեղի ունեցել: Մենք յիշում ենք երկու դէպք: «Չաղ» կտակների դէպքեր էին դրանք: «Բարեբարները» արժանացան հասարակական քննադատութիւն ունեցող պատիւներին: Ներքինան կարող է վարչութիւնը, հայոց հոգեբանականութիւնը շքեղացրին թաղման հանգէաները, շապուկից երախտագիտութիւն յայտնել «առատ» բարեբարութեան համար: Բայց վերջը հարկաւորված եղան հրատարակել կտակած «հարստութիւնից», երբ յայտնի դարձաւ, որ «բարեբարները» ոչինչ հարստութիւն չեն թողել, որ նրանք կտակներ են գրել շքեղ զարձուածքներով, բայց առանց նիւթական բովանդակութեան, առանց իրապէս մի բան թողնելու:

Երևակայեցեք այսպիսի դրութիւն: Մի դպրոցի վարչութիւն խմանում է, որ մի բարեբար իր աները նրան է կտակել: Կտակը կայ, օրինաւոր է: Վարչութիւնը շտապում է փառքով ու պատուով թաղել իր բարեբարին, բայց մի քանի ամսից յետոյ իմանում է, որ կտակած աների

վրա այնքան պարտք կայ, որ եթէ դրուրոցի վարչութիւնը ընդունելու լինի, պիտի գեռ իրանից էլ մի մեծ գումար տայ՝ պարտատէրերին գոհացնելու համար: Եւ նա ստիպված է փախչել այդ «բարեբարութիւնից», հրատարակելով հրատարակել:

Միսեանց ետեկց կրկնվող դէպքերը ցոյց են տալիս, որ կտակներն էլ կորցնում են իրանց նշանակութիւնը ժամանակակից մարդու աչքում: Հայերը — սա շատ հին իրողութիւն է — սիրում են հուշակիւն իրանց մահից յետոյ: Բայց ո՞վ է տեսել, որ հասարակական ասպարէզում տեղի ունեցած լինի խաբէութիւն կտակի միջոցով: Այդ էլ ենք այսօր տեսնում: Ժամանակը ամեն ինչ կեղծելու ճարտիպութիւն է տալիս: Կարելի է ոչինչ չունենալ, բայց մահից յետոյ մի քանի ամիս հուշակիւն, թարգմանների արժանանալ, հասարակութեան երախտագիտութիւնը վայելել: Իսկ այնուհետեւ... Թող ինչ ուզում է լինի: — Չրի բարեբար դառնալ, առանց որ և է իրաւունքի հասարակութեան մէջ անուն հանել, — սա մի ծանր, խեղդող իրողութիւն է, որ շատ վատ վիշտութիւն է մեր բարոյականութեան համար:

Մենք հասկանում ենք որ փողը ամենակարգ է, որ նրա անունով կարելի է լեցնել հասարակութիւնը, մոռացնել տալ անձնական արատները, բացասական յատկութիւնները: Մինչև այժմ մեր հասարակութիւնը անթիւ անգամ ներկայ է եղել այդպիսի յաղթանակների, որ տարելի փող բարոյական հասկացողութիւնների վրա: Բայց անփող կտակներով հասարակութեան մէջ ժամանակաւոր հուշակ ու պատիւ վաստակել և ապա երեւել պարզապէս խաբող — սա ինչն է անհասկանալի: Մէթ է մի փառաւոր թողունում «ձրի բարեբարների» տեսչանքը: Այն, ինչպէս երևում է, մարդիկ ամեն մի սուրբ հակացողութիւն կարող են այլանդակել, գէթ մի ժամ փառաւորվելու, գէթ մի քանի օրով մարդկանց բերանի խօսք դառնալու համար:

Որպիսի սխուր անկում, բարոյական սրբախի անանկութիւն...

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՍՏԸ

Չորեքշաբթի, ապրիլի 14-ին, Կովկասեան գիւտերական շրջանի շտաբի շինութեան մէջ, գեներալ-ադիուտանտ Ֆրեզէի նախագահութեամբ, կայացաւ ուսաց Կայսերական աշխարհագրական ընկերութեան Կովկասեան բաժնի անդամների տարեկան ընդհանուր ժողովը:

Գարտուղարի կարգաձեռնած տեղեկագրից 1903 թ.ի գործունէութեան մասին երևաց, որ այդ տարվայ ընթացքում բաժինը ունեցել է 127 անդամ և զբաղվել է գլխաւորապէս Կովկասի ուսումնասիրութեամբ: Այդ նպատակով կազմակերպվել են գիտական ուղեւորութիւններ Կովկասի գաղապան տեղերում, ուսումնասիրութիւններ: Ծարվայ ընթացքում ընդհանուր ժողովների մէջ կարգաւորվել են գեոլոգիներ, բնագիտական Կովկասի և Պարսկաստանի մասին: Այդ գեոլոգիների մէջ իբրև աչքի ընկնող տեղեկագրերը յիշատակեց Պօղոզբեկու, Դանի, Պլիցովի, Չավադուկու և Հ. Առաքելյանի բնագիտական:

Բաժինը ունի մօտ 15,000 ռուբլի գրամազուրկ և 1903 թ. ընթացքում ունեցել է մօտ 4000 ռուբլի կամուտ:

Տեղեկագրի ընթացումից յետոյ բաժնի խաղական անգամ Դեաչկով — Տարասով կարգաւոր մի հետաքրքիր գեոլոգի մ. Արխադայի մասին: Նա ցոյց տուեց, թէ ինչպէս այդ երկրի գլխից անցել են մի քանի կուլտուրաներ —

հուսկական, բիւզանդական, արաբական, գիւտերական և պարսկական, սակայն այսօր նա գրեթէ մի անձանութ և մոռացված աշխարհ է:

### ԲԱՐԵԲԱՐՆԵՐԻ ՄՈՍԻՆ

Բարեբար բառը մեզանում գործ է ածվում շատ սահմանափակ մտքով: Բարեբար կոչվում է նա, որը իր հաշուով պահում է Ռուսաստանի կամ Եւրոպայի համալսարաններում մէկ կամ անէլի ուսանող:

Այդպիսի մարդիկ մեծ երախտով ունեն հասարակութեան վրա և արժանի են խնայելու բարեբար կոչվելու: Նրանք ազատ պատասխաններին միջոց են տալիս լրացնելու իրանց կրթութիւնը ու գիտութիւնը և այդպիսով նուրիւն են ազգին օգտակար անդամներ:

Օգտակար անդամներ...

Մանաւանդ վերջին տարիներս...

Ամենքը արդէն վաղուց հաշտվել են այն յուսանատ մտքի հետ, թէ հայ ուսանողները կամ էգօրստ, կարիերիստ, կեանքի մարդիկ են և կամ անընդունակ, թոյլ արարածներ:

Եթէ երբ երբ լուս էլ էր ուսանողից, թէ ինքը «տոգորված է հասարակութեան օգտակար լինելու ջերմ ցանկութեամբ» և «լցված բարձր իդէալներով», եկել է համալսարան և խոստանում է մեծամեծ ծառայութիւններ մատուցանել «իր կարողութեան չափով», — այդ կը լսէք միայն այն ժամանակ, երբ նա ձեռք է առել գիտու կամ գարեջրի փրփուլից բաժակը: Եւ նոյն իսկ այդ բոլորին, ինքն էլ չէ հաւատում իր խօսքերի անկեղծութեանը. խօսքը վերջացնելուց յետոյ նա դառնում է մտաբեր նստած մի ուրիշ «իդէալիստ» ուսանողի և կամացուկ շնչում: «Լաւ էր ճառս, չէ...» ու ինքնաբաւական կերպով ցոյց է տալիս ատամները...

Այնպէս որ, մի ժամանակ, երբ հայ ուսանողութիւնը Քրիստոսի աշակերտների նման, մեր երկրի աղէ էր, մեր երկրի լոյսն էր, այժմ — չենք կարող չը խոստովանել, — նա անկման մէջ է գտնվում, նա այլ ևս ոչ մի դեր չէ խաղում մեր կուլտուրական զարգացման գործում:

Թէ էլ չը կան վիճակագրական տեղեկութիւններ, թէ մեր համալսարանականներից թրքանն են իրանց սեփական միջոցներով շարունակում իրանց ուսումը և թրքանք բարեբարների հաշուով, սակայն հիմք ունենք կարծելու, որ նրանց մեծ մասը պատկանում են վերջին խմբին:

Սեփական միջոցներով ուսում անողներից չէ կարելի այնքան էլ մեծ պահանջներ անել. դրանք ինքնագործ բուրժուաներ են, որոնք ոչ ծանօթ են ժողովրդի թշուառ դրութեանը և ոչ էլ ուրիշն մտածում են նրա մասին: Ուրեմն, եթէ դրանցից ոչ մի օգուտ չէ քաղում հասարակութիւնը, դարձեալ մի կերպ կարելի է տանել այդ. բայց ի՞նչ ասենք միւս, չքաւոր, ուրիշի փողով ուսում անող ուսանողներին. չէ որ նրանք դուրս են եկել բուն ժողովրդի միջոց, գիտեն նրա կարիքները, նրա ցաւերը, չէ որ իրանք էլ մի օր ունեցել են նոյն կարիքները, այրվել են նոյն ցաւերով... Մեր բնութեան առարկան նրանք պիտի լինեն, որովհետեւ միայն նրանցից պիտի մի բան սպասենք:

Այստեղ սկսւմայ մեր մէջ մի հարց է ծագում, բարեբարներ ինչու են դառնում բարեբար և ի՞նչպիսի մարդկանց են համալսարան ուղարկում:

Ըստ երեւոյթի, այս հարցը շատ պարզ է. բարեբարը նպատակն է ծառայել հասարակութեանը ու օգնել անհատին, մէկին տալով մի օգտակար, թարմ ոյժ, միւսին՝ ծառայելու լայն ասպարէզ: Իր այս նպատակին հասնելու համար բարեբարը բարձրագոյն կրթութիւն ստանալու միջոց տալիս է մի այնպիսի մէկին, որը ընդունակ լինի իրագործել նրա ցանկութիւնը և որի վրա կարելի լինի յուսալ:

Հէնց դրանում է սխալը:

Մեր բարեբարները, դժբաղդաբար, այնքան էլ չեն հետաքրքրվում այն հարցով, թէ իրանց անները ինչ ուղղութեան, ինչ դաւանանքի տէր են, ինչ գաղափարներ ունեն և որքան ընդունակ են գործով ցոյց տալու իրանց միջոցառումները: Մեր բարեբարները, զբժարաբար, չեն ընդունակ իրանց անները ինչ ուղղութեան, ինչ դաւանանքի տէր են, ինչ գաղափարներ ունեն և որքան ընդունակ են գործով ցոյց տալու իրանց միջոցառումները:

Ել չեն հետաքրքրվում այն հարցով, թէ իրանց անները ինչ ուղղութեան, ինչ դաւանանքի տէր են, ինչ գաղափարներ ունեն և որքան ընդունակ են գործով ցոյց տալու իրանց միջոցառումները: Մեր բարեբարները, զբժարաբար, չեն էլ մտածում աչքի անցնելու նրանց անցեալը, ներկան, որից կարողանան եղբակացնել, թէ դրանից ապագայում կարելի է սպասել մի այնպիսի կամ մի այնպիսի գործիչ, մարդ:

Ի՞նչպէս են բարեբարները սան ընտրում: — 1) Հարստին դիմում է նրա մօտիկ բարեկամները, ազգականներից կամ ծանօթներից մէկը և միջնորդում է իր որդուն կամ իր այս ինչ ազգականին համալսարան ուղարկել: Հարուստը չէ կամենում իր ծանօթի «խաթը կոտրել» և հաւ դառնում է «բարեբար»: — 2) Մի քանի անգամ «տանը չէ» ստիպուց յետոյ վերջապէս մի օր հարուստի տան դռները բացվում են ուսանողացուի առջ, և նա, վախկոտութեամբ ներս մտնելով, ներկայանում է «աղին» ու աղաչում-պաղատում է իր ուսման ծախսը հոգալ: Եթէ մի հարուստ մերժում է, վերջապէս գտնվում է մի չը մերժող:

Եւ հաւ ձեռք երկու բարեբար և երկու ուսանող:

Ո՞վ կարող է այդ ուսանողների վրա յոյս դնել, նրանցից մի բան սպասել: Ամեն մի չքաւոր պատանի, ամեն մի ուսումնասանող երիտասարդ արդեօք կարող է այդ երկու ծանապարհներով գնալ: Միթէ ամեն մէկը ունի բուրժուայի մօտ մի ծանօթ, մի հովանաւոր: Միթէ ամեն մէկը կարող է գնալ ընկնել հարուստի ոտները և մտերացկանի պէս ողորտութիւն հայցել:

Եւ ծանապարհ եմ իմ ընկերակիցներից մի բանիսին, — դուք էլ գուցէ գիտէք մի բանի այդպիսիների մասին, — որոնք մինչև հիմա էլ, — ուրեմն չորբող տարին է արդէն, բարեբար չեն գտել: Ինչու... — որովհետեւ չեն ուսնեցել նախ արտակէցիւս, երկրորդ, չեն կարողացել «Մեծապատիւ մտերացկաններ» դառնալ, այսինքն, ուրիշ խօսքերով ասելով, չեն կարողացել գնալ այն երկու ծանապարհներով, որոնք միայն տանում են դէպի համալսարանի դռները:

Բայց միթէ միայն երկու ծանապարհ կայ. չի կարելի արդեօք մի ուրիշ ծանապարհ գտնել, որը լինէր ակնի աղին և որը որոշ չափով կարողանար երաշխաւորել սպասելիքների համար:

Մեր կարծիքով այդ երրորդ միջոցը հետեւեալն է:

Կովկասում, չը հաշված պետական մի տասնակից ակնի գիմնադրանքներ և բէալական դպրոցները, կան Գեորգեան ձեմարանը, Ներսիսեան դպրոցը և երևանի ու Նոր-Նախիճեանի թեմական դպրոցները. դրանցից իւրաքանչիւր տարի աւարտման վկայական են ստանում տասնեակ երիտասարդներ: Ո՞վ կարող է ժխտել, որ դրանց մէջ կը գտնվեն այնպիսիները, որոնք նիւթական միջոցներից զուրկ լինելու պատճառով չեն կարողանում դիմել գիտութեան տաճարները: Այդպիսի պատանիների դրութեանը անշուշտ յայտնի կը լինի դպրոցների վարչութեան: Վարչութեանը յայտնի կը լինի նաև նրանց վարքն ու բարքը, ընդունակութիւնը, աշխատասիրութիւնը, վերջապէս նրանց ձգտումները:

Բարեբարների մէջ էլ կան այնպիսիները, որոնց նպատակն է խնայելու հասարակութեան և ազգի համար պատրաստել օգտակար անդամներ:

Ի՞նչպէս անենք:

Թող բարեբարը դիմէ վերև յիշած դպրոցները մէկի վարչութեանը և յայտնէ իր ցանկութիւնը նպատակ տալ մի կամ անէլի չքաւոր և յուսատու պատանիների, որոնց ընտրութիւնը թողնէ դպրոցին:

Այն ժամանակ, կարծում ենք, եթէ ոչ ամբողջովին, գոնէ մասամբ կը վերջանան մեր գաղափարները ուսանողութեան դէմ:

Այն ժամանակ համալսարան կը գնան ոչ





